



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19.11.2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՐԱԴ
ԱՐԱՐԱՏԻ ԱՍՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԹԻՎ ԿԳ-25075-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**)՝ նախագահությամբ Յուլակ Մարգարյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Ռոման Ահարոնյանի, Դավիթ Մելքոնյանի և Պավել Գյուլումյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Մուրադ Ասրյանի բողոքը (մուտք՝ 13.04.2026թ. № 952-2026) Պալատի կարգապահական հանձնաժողովի (**այսուհետև՝ Հանձնաժողով**) 19.11.2025 թվականի թիվ ԿԳ-25075-2-Ա որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Գործի նախապատմությունը.

Պալատում 13.04.2026թ. մուտքագրվել է փաստաբան Մուրադ Ասրյանի (**այսուհետև՝ Փաստաբան կամ Բողոքաբեր**) բողոքը, որով վերջինս խնդրել է Խորհրդին՝ բեկանել իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին **Հանձնաժողովի** 19.11.2025թ. ԿԳ-25075-2-Ա որոշումը (**այսուհետև՝ Որոշում**):

Բողոքաբերին վերագրվել է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության ընթացքի մասին վստահորդին չտեղեկացնելու վարքագիծը:

Պալատի նախագահի 30.06.2025թ. թիվ 186-Ա/ԿԳ-25075 որոշմամբ փաստաբանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի

հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաթանի վարքագծի կանոնագրքի (այսուհետև՝ **Կանոնագիրք**) 3.5.5 և 3.6.1 **ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Հանձնաժողովի Որոշմամբ Փաստաթան Մուրադ Ասրյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ «**նկատողություն**»՝ «**Փաստաթանության մասին**» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև **Կանոնագրքի** 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնաժողովի Որոշման էությունը.

Հանձնաժողովը Որոշմամբ նշել է հետևյալը.

«(...) Փաստաթանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ պարտավորվելով վիճարկել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը և իրականացնել ներկայացուցչություն բոլոր դատական ատյաններում:

Տրված հանձնարարության շրջանակներում Փաստաթանը կազմել և «Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի միջոցով թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում 18.04.2024 թվականին ներկայացրել էր հայցադիմում՝ խնդրելով անվավեր ճանաչել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը, վերականգնել Դիմողին նախկին աշխատանքում, բռնագանձել հարկադիր պարապուրդ:

Մասնավորապես, Փաստաթանը հայցադիմումի շրջանակներում որպես «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանի վիճարկման հիմք վկայակոչել է դրանում փաստական հիմքի բացակայությունը:

Դիմողը 14.10.2024 թվականին Փաստաթանին ուղարկել է հղիների հաշվառման գրանցամատյանից քաղվածքը, իսկ 07.11.2024 թվականին՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից տրված 09.01.2024 թվականի ուլտրաձայնային հետազոտության փաստաթուղթը, սակայն Փաստաթանը դրանց հաշվառմամբ փաստացի չի իրականացրել հայցի հիմքի լրացում և դրան վերաբերող ապացույցները թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով ներկայացրել է Դատարանին 19.11.2024 թվականին, մինչդեռ Դատարանը 13.11.2024 թվականի որոշմամբ արդեն բաշխվել է ապացուցման պարտականությունը և օրը կայացրել էր որոշում՝ գործը նշանակվելով դատաքննության:

Այս առումով, կարգապահական գործում առկա ապացույցներից հետևում է, որ Փաստաթանը համակարգի միջոցով ընդամենը ներկայացրել է Դիմողի հղիության վերաբերյալ ապացույցները, սակայն դրան զուգահեռ չի ներկայացրել միջնորդություններ հայցի հիմքերը լրացնելու, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը

փոփոխելու վերաբերյալ, ինչպես նաև ապացույց ներկայացնելու համար սահմանված ժամկետների բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ: Նշվածը, անկախ Դատարանի կողմից այդ միջնորդությունների ընդունման կամ քննարկման հանգամանքից, բավարար էր, որպեսզի Փաստաբանի կողմից ձեռնարկված գործողությունները բավարար Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության տեսանկյունից:»

Հանձնաժողովը անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Դիմողին հանձնարարության ընթացքի վերաբերյալ կանոնավորապես չտեղեկացնելու հարցին Որոշմամբ արձանագրվել է հետևյալը.»

Որոշմամբ արձանագրվել է նաև հետևյալը,

«(...)Հատկանշական է, որ Դատարանը 04.12.2024 թվականի վճիռը փաստացի ստորագրվել է 13.12.2024 թվականին և առնվազն այդ օրը հասանելի է եղել Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգում, որպիսի պայմաններում, նկատի ունենալով դրա հետագա բողոքարկման անհրաժեշտության առաջանալու հարցը, Փաստաբանը պարտավոր էր առնվազն տեղեկացնել Վճռի մասին Դիմողին այնպես, որպեսզի վերջինս ունենա ողջամիտ ժամկետ դրա հետագա ընթացքը որոշելու համար:

Հանձնաժողովը փաստում է, որ Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի միջոցով Փաստաբանին, որպես համակարգից օգտվող անձի հասանելի էր հենց այն պահից, երբ բեռնվել է Դատարանի կողմից: Ըստ այդմ, նկատի ունենալով, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, թե կոնկրետ երբ է ստացել Վճիռը, իսկ Վճիռը փաստացի ստորագրվել է 13.12.2024 թվականին, Հանձնաժողովն արձանագրում է, որ առնվազն 13.12.2024 թվականին Վճիռը հասանելի էր եղել համակարգում և ուղարկվել էր Փաստաբանին, մինչդեռ Վճիռը Դիմողին ուղարկվել է 37 օր անց՝ 18.01.2025 թվականին:»

3. Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը.

Բողոքաբերը հայտնել է, որ համաձայն չէ Հանձնաժողովի եզրահանգումների հետ:

Անդրադառնալով Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու Հանձնաժողովի դիտարկումներին, Բողոքաբերը նշել է, որ խնդրո առարկա դատական գործի շրջանակներում Դատարանը ընդհանրապես չի բաշխել ապացուցման պարտականությունը կողմերի միջև:

Ավելին, Բողոքաբերը նշել է, որ դատարանը իրեն չի առաջարկել համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ: Ընդ որում, դատարանը չի բավարարել դատական նիստը հետաձգելու Փաստաբանի

միջնորդությունը՝ որպեսզի վերջինս հնարավորություն ունենա հայցապահանջի լրացում իրականացնել:

Բողոքաբերը պնդել է, որ դատարանը թույլ չի տվել կատարել հայցի լրացում և չի ընդունել վերջինիս կողմից ներկայացված ապացույցները:

Փաստաբանին ուղարկված հղիների հաշվառման գրանցամատյանից քաղվածքի, և «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից տրված ուլտրաձայնային հետազոտության փաստաթղթի հաշվառմամբ փաստաբանի կողմից փաստացի հայցի հիմքի լրացում չանելու և դրան վերաբերող ապացույցները թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Դատարանին 19.11.2024թ.–ին ներկայացնելու արդյունքում Դիմողի շահերը վնասելու վերաբերյալ Հանձնաժողովի դիրքորոշման կապակցությամբ նշել է, որ այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ փաստաթղթերը սոսկ Դատարան ներկայացնելով իրականում Դիմողի շահերը լիարժեք չի ապահովվում:

Վկայակոչելով Աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետը՝ պարզաբանել է, որ գործատուին արգելվում է իր նախաձեռնությամբ հղի կանանց հետ աշխատանքային պայմանագրի լուծումը, միայն այն դեպքում, երբ աշխատողն իր հղիության մասին գործատուին ներկայացրել է տեղեկանք:

Նշել է, որ տվյալ պարագայում, ապացույց այն մասին, որ Դիմողն իր հղիության մասին տեղեկանքը ներկայացրել է գործատուին առկա չէր: Հաշվի առնելով վերոգրյալը՝ այդ գործով հայցապահանջը ներկայացնելիս դրա մասին չի նշվել հայցապահանջում: Մարտավարությունը պարզաբանելով՝ նշել է, որ նախնական դատական նիստերի ժամանակ մինչև ապացուցման բեռ բաշխելը ցանկացել է հարցադրումների միջոցով Պատասխանողի ներկայացուցչից պարզել, արդյոք գործատուն տեղյակ էր Դիմողի հղիության մասին թե ոչ, այդ իսկ պատճառով էլ համակարգում հղիության մասին փաստաթղթեր են ներկայացվել և դատական նիստերին այդ մասին հարցեր ուղղվել Պատասխանողի ներկայացուցչին:

Փաստաբանն անդրադառնալով վճռի վերաբերյալ Դիմողին տեղեկացնելու հարցին նշել է, որ ծանոթացել է վճռին 13.01.2025թ. և այդ կամ հաջորդ օրը իրազեկել է վստահորդին:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Հանձնաժողովի Որոշումը:

4. Դիմողի դիրքորոշումը Փաստաբանի բողոքի վերաբերյալ.

Մինչև սույն որոշման կայացումը 07.05.2026թ. Դիմող՝ Մանյա Գասպարյանին առաջարկվել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի գործունեության» կարգի 61-րդ կետի համաձայն ներկայացնել դիրքորոշում Փաստաբանի բողոքի վերաբերյալ:

Դիմողը 12.05.2026թ. ներկայացրած բացատրությամբ վերահաստատել է

նախկինում արտահայտած դիրքորոշումը առ այն, որ Փաստաբանը պատշաճ չի ներկայացրել իր իրավունքները դատարանում:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը դատարան չի ներկայացրել գործի համար էական փաստեր, ինչը անհնարին է դարձրել վերաքննիչ դատարանում այդ փաստերի ներկայացումը:

Դիմողը հավելել է, որ Փաստաբանը 37 օր ուշացումով է ուղարկել դատարանի վճիռը:

Վերոգրյալի հաշվառմամբ Դիմողը խնդրել է մերժել Փաստաբանի բողոքը, ինչպես նաև ենթարկել Փաստաբանին ավելի խիստ պատժի:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները.**

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ պարտավորվելով վիճարկել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը և իրականացնել ներկայացուցչություն բոլոր դատական ատյաններում: ***Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, 18.03.2024 թվականի կնքված պայմանագրով (այսուհետ՝ նաև՝ Պայմանագիր), ինչպես նաև 18.03.2024 թվականի լիազորագրով:***

2. Տրված հանձնարարությանը համապատասխան Փաստաբանը կազմել և «Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության միջոցով թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացրել էր հայցադիմում՝ խնդրելով անվավեր ճանաչել «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանը, վերականգնել Դիմողին նախկին աշխատանքում, բռնագանձել հարկադիր պարապուրդ: ***Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված հայցադիմումով, ինչպես նաև թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգից արտատպված քաղվածքով:***

3. Փաստաբանը հայցադիմումի շրջանակներում որպես «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի 26.02.2024 թվականի 03/002-2-24 հրամանի վիճարկման հիմք վկայակոչել դրանում փաստական հիմքի բացակայությունը: ***Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված հայցադիմումով:***

4. Դիմողը հղիների հաշվառման գրանցամատյանից քաղվածքն ուղարկել է Փաստաբանին 14.10.2024 թվականին, իսկ «Կառլեն Եսայանի անվան պոլիլիինիկա» ՓԲԸ-ի կողմից տրված 09.01.2024 թվականի ուլտրաձայնային հետազոտության փաստաթուղթը ուղարկել է Փաստաբանին 07.11.2024 թվականին: ***Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի բացատրություններին կից ներկայացված «WhatsApp» հավելվածում Դիմողի և Փաստաբանի միջև առկա նամակագրության քաղվածքներով:***

5. Թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 13.11.2024 թվականի որոշմամբ բաշխվել է ապացուցման պարտականությունը, իսկ 13.11.2024 թվականի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության: **Նշված փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 04.12.2024 թվականի վճռով:**

6. Թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով Փաստաբանը 19.11.2024 ներկայացրել է Դիմողի և «Քուեսթգլոբալ Արմենիա» ՍՊԸ-ի տնօրենի միջև նամակագրությունը, ինչպես նաև «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից տրված 09.01.2024 թվականի ուլտրաձայնային հետազոտության փաստաթուղթը որպես ապացույցներ: **Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգից արտատրված քաղվածքներով:**

7. Դատարանը 04.12.2024 թվականի վճռով մերժել է Դիմողի հայցը, արձանագրվելով, որ «...հայցվորը վկայակոչել է նոր փաստ, որ վիճելի անհատական իրավական ակտի կայացման պահին հայցվորը եղել է հղի, ... Դատարանը հայցվորի ներկայացուցչի փաստարկը, որ վիճարկվող 26.02.2024թ. թիվ 03/002-24 հրամանը չունի փաստական հիմք, անհիմն է համարում, քանի որ գործի քննությամբ հաստատվեց, որ նշված անհատական իրավական ակտը պարունակում է ինչպես փաստական, այնպես էլ իրավական հիմքերը»: **Նշված փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ, ինչը նշել էր նաև Պալատի նախագահի 30.06.2025թ. թիվ 186-Ա/ԿԳ-25075 որոշման մեջ:**

8. Դատարանն իր վճռում նշել է. «Տվյալ դեպքում հայցվորը վկայակոչել է նոր փաստ, որ վիճելի անհատական իրավական ակտի կայացման պահին հայցվորը եղել է հղի, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝ հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը:

Վերլուծելով մեջբերված նորմը՝ պարզ է դառնում, որ գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելք կարող է առաջանալ միայն այն պարագայում, երբ աշխատողն իր հղիության մասին գործատուին ներկայացնում է համապատասխան փաստաթղթեր, մինչդեռ հայցվորի կողմից նշված փաստարկը հաստատող որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել, որպիսի փաստը վիճելի մնալու դեպքում՝ դրա բացասական հետևանքները պետք է կրի այդ փաստը վկայակոչած անձը՝ տվյալ դեպքում հայցվորը:»

9. Դիմողը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից և լուծել նրա հետ կնքված Պայմանագիրը 20.01.2025 թվականին: **Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացարձակությամբ, ինչպես նաև Պայմանագիրը լուծելու մասին 20.01.2025 թվականի համաձայնագրով:**

10. Թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով 24.12.2024 թվականի վճիռը Փաստաբանը ուղարկել է Դիմողին 18.01.2025 թվականին: **Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացարձակությամբ:**

6. Խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումն անհրաժեշտ է մասնակի վերացնել հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) **կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:**

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պարասխանադրության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) **նկատողություն.**

2) **խիստ նկատողություն.**

3) **լրացուցիչ վերապարաստման դասընթացներին մասնակցել.**

4) **տուգանք.**

5) **փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:**

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Տվյալ դեպքում Խորհրդի գնահատման առարկան ոչ թե թիվ ԵԴ2/3060/02/24 քաղաքացիական գործով դատարանի կողմից վեճի ըստ էության լուծման իրավաչափությունն է, այլ այն, թե Փաստաբանը ստանձնած հանձնարարության շրջանակում գործել է արդյոք անհրաժեշտ մասնագիտական բարեխղճությամբ, պատշաճ հետևողականությամբ և վստահորդի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ ողջամիտ դատավարական միջոցների կիրառմամբ:

Այլ կերպ ասած՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը չի կարող պայմանավորվել միայն այն հանգամանքով, որ վստահորդի հայցը մերժվել է: Միևնույն ժամանակ, դատական գործի բացասական ելքը չի բացառում փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը, եթե գործի նյութերով հաստատվում է, որ փաստաբանը չի ձեռնարկել այն անհրաժեշտ մասնագիտական գործողությունները, որոնք տվյալ իրավիճակում ողջամտորեն ակնկալելի էին փաստաբանից:

Տվյալ պարագայում, անդրադառնալով Դիմողի իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության տեսանկյունից փաստաբանին մեղսագրված խախտմանը, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի եզրահանգումը, որ Փաստաբանի կողմից ձեռնարկված գործողությունները բավարար չեն եղել Դիմողի իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության տեսանկյունից, հիմնավոր չէ:

Տվյալ դեպքում փաստաբանին մեղսագրվում է այն, որ նա ուշացումով ներկայացված ապացույցներին զուգահեռ չի ներկայացրել դատավարական ընթացակարգն ապահովող միջնորդություններ (հայցի փաստական հիմքը լրացնելու, ապացուցման բեռի բաշխման որոշումը փոփոխելու մասին):

Սակայն Հանձնաժողովն ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ դատարանն այնուամենայնիվ քննարկել է փաստաբանի առաջ քաշած փաստը՝ թեև նշելով որ նա նոր փաստ է առաջ քաշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **Դատարանը բոլոր դեպքերում վիճարկվող անհատական ակտը ճանաչում է անվավեր, եթե պատասխանողի կողմից խախտվել է աշխատանքային պայմանագիրը կամ անհատական իրավական ակտը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, հանրային կամ**

այլընտրանքային ծառայության անցնելու, դրանից ազատելու՝ **օրենքով**, այլ նորմատիվ կամ գործատուի, իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի ներքին իրավական ակտով **սահմանված կարգը**:

Դատարանն իր վճռում ուղիղ նշել է. «գործարուն կրում է միայն անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը, իսկ հայցվորի կողմից նոր փաստ վկայակոչվելու դեպքում դրանց ապացուցման բեռը կրում է վերջինս՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

Տվյալ դեպքում հայցվորը վկայակոչել է նոր փաստ, որ վիճելի անհատական իրավական ակտի կայացման պահին հայցվորը եղել է հղի, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծումը գործարուի նախաձեռնությամբ արգելվում է՝ հղի կանանց հետ՝ հղիության մասին գործարուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը:

Վերլուծելով մեջբերված նորմը՝ պարզ է դառնում, որ **գործարուի կողմից աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելք կարող է առաջանալ միայն այն պարագայում, երբ աշխատողն իր հղիության մասին գործարուին ներկայացնում է համապատասխան փաստաթղթեր**, մինչդեռ հայցվորի կողմից նշված փաստարկը հաստատող որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել, որպիսի փաստը վիճելի մնալու դեպքում՝ դրա բացասական հետևանքները պետք է կրի այդ փաստը վկայակոչած անձը՝ տվյալ դեպքում հայցվորը»:

Այստեղից հետևում է, որ դատարանն, այնուամենայնիվ, քննարկել և նշել է, որ հղիության փաստը միայն որոշակի դեպքում կարող էր ազդեցություն ունենալ: Ակնհայտ է դառնում, որ անկախ դատարանի կողմից փաստաբանի հղիության փաստի վերաբերյալ ներկայացրած ապացույցները հանելու հանգամանքից (անկախ նրանից, թե փաստաբանը ինչպես է ներկայացրել դատարանին հղիության փաստը), դատարանն այն քննարկել է՝ նշելով, որ տվյալ դեպքում այն միևնույն է չէր օգնելու գործին, քանի որ այստեղ կարևորվում է, ոչ թե անձի հղի լինելու փաստը կոնկրետ ամսաթվի դրությամբ, **այլ որ աշխատողն իր հղիության մասին անհրաժեշտ պահին հայտնած լինի գործատուին դրա մասին, որպեսզի նա օրենքի ուժով չկարողանա լուծել պայմանագիրը**:

Ավելին այդ փաստի Դատարանի կողմից քննարկման պարտականությունը բխում է աշխատանքային վեճերով օրենքով սահմանված առանձնահատկություններից:

Նյութերից պարզ է դառնում, որ փաստաբանին են տրամադրվել ընդամենն անձի հղի լինելու մասին ապացույցներ, այլ ոչ թե դատարանի կողմից կարևորված և միակ ազդեցություն ունեցող պարագայի համար անհրաժեշտ ապացույցներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում մեղսագրված թերացումն իրականում հաղթահարվել է հենց գործի ընթացքում, իսկ դատարանի վճռով էլ հաստատվել է, որ այն **չէր էլ կարող որևէ կերպ ազդել** գործի ելքի վրա:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետի ուժով՝ հղիության փաստը հանդիսանում է աշխատանքից ազատման բացարձակ արգելք **միայն այն դեպքում, երբ աշխատողը համապատասխան տեղեկանքը գործատուին ներկայացրել է մինչև աշխատանքային պայմանագրի լուծումը:**

Քանի որ Դիմողը (վստահորդը) նման տեղեկանք գործատուին նախապես չէր ներկայացրել, այս նյութաիրավական բացթողումն **օբյեկտիվորեն անդառնալի էր:**

Կարգապահական հանձնաժողովի այն մոտեցումը, թե փաստաբանի քայլերը «լիարժեք կամ բավարար չէին», հերքվում են հենց քաղաքացիական գործով կայացված վճռի բովանդակությամբ, քանի որ դատարանի կողմից հղիության փաստի քննարկումը պայմանավորվել է նաև հենց **փաստաբանի գործադրած ջանքերի, ապացույցները համակարգ ներբեռնելու և դատաքննության ընթացքում այդ փաստարկն առաջ մղելու, հարցադրումների արդյունքում:**

Ստացվում է մի իրավիճակ, որտեղ Փաստաբանն իր ջանքերի շնորհիվ ի վերջո հասել է նպատակին՝ Դատարանն այնուամենայնիվ անդրադարձել է ուշացած ապացույցների բովանդակությանը:

Արդարացված չէ պատժել փաստաբանին ընթացակարգային մասն ապահովող միջնորդություն չգրելու համար, այն պարագայում, **երբ հարցն առանց այդ միջնորդության էլ հաջողությամբ դարձել է քննության առարկա:**

Խորհուրդը գտնում է, որ վրիպակը կամ թերացումը, որը որևէ կերպ հաղթահարվել է կամ օբյեկտիվորեն անհետևանք է մնացել, **չպետք է դիտարկվի որպես փաստաբանի կողմից թույլ տրված կարգապահական խախտում:**

Անհրաժեշտ է առաջնորդվել «հաղթահարված կամ անհետևանք թերացման» չափորոշիչով, որը թույլ կտա յուրաքանչյուր դեպքում հաղթահարել նմանատիպ խախտումների «վտանգավորության» անհրաժեշտ շեմը:

Խորհուրդը գտնում է, որ այն դեպքերում, երբ թեև ձևական առումով խախտումն առկա է, սակայն այն փաստաբանի գործողությունների արդյունքում որևէ կերպ հաղթահարվում է կամ ինքնին անհետևանք է, չի ազդել և/կամ չէր էլ կարող ազդել օրենքով կամ վարքագծի կանոններով պահպանվող շահերի վրա, ապա նման խախտումների դեպքում պատասխանատվություն չի կարող կիրառվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի վարքագծում բացակայում է կարգապահական խախտման հիմքը, քանի որ ընթացակարգային բնույթի թերացումն ամբողջությամբ հաղթահարվել է գործի քննության ընթացքում, այն որևէ բացասական հետևանք չի առաջացրել վստահորդի իրավունքների համար և

օբյեկտիվորեն չէր կարող ազդել դատական գործի ելքի վրա, ինչն էլ հիմք է հանդիսանում փաստաբանին կարգապահական պատասխանատվության չենթարկելու համար:

Ուստի անհրաժեշտ է Հանձնաժողովի որոշումը փաստաբանին **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5** ենթակետերի խախտման համար պատասխանատվության ենթարկելու մասով վերացնել:

Ինչ վերաբերում է Փաստաբանին մեղսագրված մյուս խախտմանը, ապա Խորհուրդը գտնում է, որ այս մասով Հանձնաժողովի որոշումն անհրաժեշտ է թողնել անփոփոխ:

Դատարանի վճիռը փաստացի ստորագրվել է 13.12.2024թ. և առնվազն այդ օրվանից հասանելի է եղել «Armlex» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգում: Փաստաբանը, հանդիսանալով տվյալ գործով ներկայացուցիչ և համակարգի հատուկ օգտատեր, ուներ դատական ակտին հասանելիություն ապահովելու և գործի ընթացքին հետևելու մասնագիտական պարտականություն:

Փաստաբանը պարտավոր է ողջամիտ պարբերականությամբ հետևել էլեկտրոնային դատավարական համակարգում գործի ընթացքին, հատկապես այն փուլում, երբ գործով արդեն կայացվել է եզրափակիչ դատական ակտ և կարող է ծագել բողոքարկման ժամկետների պահպանման անհրաժեշտություն:

Այս պայմաններում Բողոքաբերի այն պնդումը, որ ինքը վճռին ծանոթացել է միայն 13.01.2025 թվականին և նույն կամ հաջորդ օրը տեղեկացրել է վստահորդին, չի կարող համարվել բավարար: Եթե դատական ակտը հասանելի է եղել համակարգում ավելի վաղ, ապա դրա ծանոթացումը չի կարող վերացնել Փաստաբանի մասնագիտական պարտականությունը՝ ժամանակին հետևելու գործի ընթացքին և ողջամիտ ժամկետում վստահորդին տեղեկացնելու դատական ակտի մասին:

Գործի նյութերից հետևում է, որ Դիմողը վճռի մասին տեղեկացվել է միայն 18.01.2025 թվականին, այսինքն՝ վճռի հասանելի դառնալուց հետո շուրջ մեկ ամիս անց:

Նման ուշացումը օբյեկտիվորեն կարող էր ազդել վստահորդի՝ դատական ակտի հետագա բողոքարկման նպատակահարմարությունը գնահատելու, նոր ներկայացուցչի դիմելու կամ իր իրավունքների պաշտպանության հետագա եղանակը որոշելու հնարավորության վրա: Վստահորդին հանձնարարության ընթացքի, այդ թվում՝ գործով կայացված դատական ակտերի մասին տեղեկացնելու պարտականությունը չի կրում ձևական բնույթ:

Այս համատեքստում Հանձնաժողովը հիմնավոր և արդարացիորեն արձանագրել է, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կհաստատի, թե կոնկրետ երբ է ստացել կամ ծանոթացել վճռին: Ավելին, նույնիսկ Փաստաբանի այն պնդումը, թե ինքը վճռին ծանոթացել է միայն 13.01.2025թ., ինքնին չի կարող արդարացնել իր վարքագիծը,

քանի որ վճռի փաստացի ուշ ընթերցումը չի վերացնում նրա մասնագիտական պարտականությունը՝ 13.12.2024թ. սկսած հետևել համակարգում հասանելի դարձած դատական ակտերին և ողջամիտ ժամկետում դրանց մասին իրազեկել վստահորդին:

Այսպիսով՝ Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Հանձնաժողովի կողմից սույն խախտման մասով կատարվել է պատշաճ քննություն, նյութական իրավունքի նորմերը մեկնաբանվել և կիրառվել են ճիշտ կերպով, ինչի արդյունքում կատարվել են իրավաչափ եզրահանգումներ և կայացվել է իրավաչափ Որոշում, որը ներկայացված Բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ենթակա չէ վերացման:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից ներկայացված այն խնդրանքին, որ Փաստաբանի նկատմամբ կիրառվի ավելի խիստ կարգապահական տույժ, ապա Խորհուրդը արձանագրում է, որ սույն վարույթը հարուցվել և քննվում է Փաստաբանի կողմից Հանձնաժողովի որոշման դեմ ներկայացված բողոքի հիման վրա: Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի ուժով Խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում և իրավասու է այն թողնել անփոփոխ կամ ամբողջությամբ կամ մասնակի վերացնել: Հետևաբար Դիմողի՝ ավելի խիստ կարգապահական տույժ կիրառելու խնդրանքը սույն բողոքարկման վարույթի շրջանակում ինքնուրույն քննության առարկա լինել չի կարող:

Խորհուրդը փաստում է, որ Հանձնաժողովի որոշումը փաստաբանին Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի խախտման համար պատասխանատվության ենթարկելու մասով վերացնելը, իսկ մնացած մասով անփոփոխ թողնելը չի ազդում կիրառված տույժի տեսակի վրա: Անփոփոխ թողնված մասի դեպքում կիրառված տույժը համաչափ է, ենթակա չէ փոփոխության:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 19.11.2025 թվականի «Փաստաբան Մուրադ Արարատի Ասրյանի (արտոնագիր՝ թիվ 877) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25075-2-Ա որոշման դեմ Մուրադ Ասրյանի կողմից 13.04.2026 թվականին ներկայացված բողոքը բավարարել մասնակի:

2. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 19.11.2025 թվականի թիվ ԿԳ-25075-2-Ա որոշումը փաստաբան Մուրադ Ասրյանին «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես

նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի խախտման համար պատասխանատվության ենթարկելու մասով վերացնել, մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝**

Յուլալ Մարգարյան

13 մայիսի 2026թ.

թիվ ԿԳ/08-Ա

ք. Երևան